ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/42 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների /Վանաձորի պետական համալսարանի համար ունիվերսալ սպորտդահլիճ/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 16.05.2023թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Մասիս Աղայանց /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Հովսեփ Գրիգորյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /գնահատող/
	Արմեն Քոչարյան /բացող/
	Արտյոմ Պետրոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արմինե Սահակյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/42 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Լիլ Ռուզ» ՍՊԸ
2	«Միքնար» ՍՊԸ
3	«Տեխ Դրաֆտ» ՍՊԸ
4	«Վանաձորի նախագծող» ՍՊԸ
5	«Սարդարյանշին» ՍՊԸ
6	«Միկան» ՍՊԸ
7	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
8	«Վանինվեստ» ՍՊԸ
9	«Իրտիգ» ՍՊԸ

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակիցների առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Գնման գինը ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը															
		«Միքնար» ՍՊԸ		«Տեխ Դրաֆտ» ՍՊԸ		«Վանաձորի նախագծող» ՍՊԸ		«Սարդարյանշին» ՍՊԸ		«Միկան» ՍՊԸ		«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ		«Վանինվեստ» ՍՊԸ		«Իրտիգ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ															
		Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ	Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ	Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ	Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ	Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ	Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ	Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ	Առանց ԱՄՀ	Ներառյալ ԱՄՀ
1	4083790	1900000	1900000	3500000	3500000	3480000	3480000	1200000	1200000	1590000	1590000	1700000	2040000	1700000	1700000	2470000	2964000

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2023թ մայիսի 26-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.05.2023թ. ժամը 11:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «**Լիլ Ռուզ**» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, ինչը շտկման ենթակա չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 «**Միքնար**» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ նշված ՀՎՀՀ-ն «Միքնար» ՍՊԸ-ինը չէ:
- Ներկայացված փաստաթղթերում բացակայում է կազմակերպության ղեկավարի պաշտոնը և անուն ազգանունը:
- Հայտով ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը թերի է և չի կարող գնահատվել որպես նմանատիպ մատուցված ծառայություն, քանի որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում աշխատանքային գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը թերի է նշված:
- Գագիկ Վասիլյանի որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և տեղեկանքում նշված որակավորմանը,

իսկ կից ներկայացված աշխատանքային գրքույկը՝ տեղեկանքում նշված աշխատանքային փորձի ժամանակահատվածին:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 **«Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:
Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքով ներկայացված մասնագետի որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, լրացված չէ հրավերով սահմանված կարգով՝ նշված չէ գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, ինչպես նաև կից ներկայացված համառոտ կենսագրությունով կատարված աշխատանքները և ծառայությունները չեն համապատսխանում հրավերով սահմանված պահանջներին:
- Հայտով ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նմանատիպ մատուցված ծառայություն, քանի որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.4 **«Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:
Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության մեջ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը սխալ է:
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես նշված չէ գործատուի ավանումը, աշխատանքային փորձի ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:
- «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը թերի են, մասնավորապես՝ բացակայում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը, իսկ ներկայացված հանձնման-ընդունման ակտերով պարզ է, որ մատուցված ծառայությունը չի կարող գնահատվել որպես նմանատիպ, քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.5 **«Սարդարյանշին» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Բացակայում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին:
- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում նշված չէ աշխատանքային փորձի ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:
- Հայտով ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նմանատիպ մատուցված ծառայություն, քանի որ այն չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.6 **«Միկան» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:
Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Մասնագիտական փորձառությունը հիմնավորելու համար ներկայացված պայմանագիրը թերի է, բացակայում են անբաժանելի մասը կազմող հավելվածները, ինչը հնարավորություն չի տալիս այն պատշաճ կատարված գնահատելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.7 **«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում նշված չէ աշխատանքային գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:
- Հայտով ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նմանատիպ մատուցված ծառայություն, քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.8 **«Իրտիգ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում նշված չէ աշխատանքային փորձի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, իսկ ներկայացված մասնագետի որակավորումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և տեղեկանքում լրացված որակավորմանը:
- Հայտով ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նմանատիպ մատուցված ծառայություն, քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.9 **«Վանինվեստ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքում նշված չէ աշխատանքային փորձի ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, իսկ ներկայացված մասնագետի որակավորումը չի համապատասխանում տեղեկանքում լրացված որակավորմանը:
- Հայտով ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նմանատիպ մատուցված ծառայություն, քանի որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2-ից 6.8-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել 2023թ. հունիսի 05-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 05.06.2023թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.1-ից 6.8-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունները:lj

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.2 **«Վանինվեստ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում չի շտկել հանձնաժողովի կողմից 6.9 կետով արձանագրված անհամապատասխանությունները՝ կրկին բացակայում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակցի վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից.

1-ին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել **«Սարդարյանշին» ՍՊԸ-ին,**

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Միկան» ՍՊԸ-ին,**

3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին,**

4-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Միքնար» ՍՊԸ-ին,**

5-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Իրտիգ» ՍՊԸ-ին,**

6-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ին,**

7-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6.1 կետը, մերժել «Լիլ Ռուզ» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9.3 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.2 կետը մերժել **«Վանինվեստ» ՍՊԸ-ի** հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ARMEPS համակարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Վանինվեստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մասիս Աղայանց /նախագահ/

_____ Հովսեփ Գրիգորյան

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Արմեն Քոչարյան

_____ Արտյոմ Պետրոսյան

_____ Արմինե Սահակյան /քարտուղար/